

**ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՏԱՐԱՐԺԵՓՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՐՊԵՍ ՈՉ ԿԾԱՅԻՆ ԲԱՌԱՍՏԵՎԾՄԱՆ ԱՐԳՅՈՒՆՔ**

**Ա. Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Լեզվում բառերը իրենց արտահայտած ընդհանուր իմաստով, ձևաբանական առանձնահատկություններով և շարահյուսական կիրառություններով դասակարգվում են ըստ առանձին խոսքի մասերի: Սակայն խոսքի մասերի բառակազմը մշտապես անփոփոխ բառերի խումբ չէ. լեզուներում նկատվում են խոսքիմասային փոխանցումներ. մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սա շատ լեզուներին հատուկ երևույթ է: Ո՞րն է խոսքիմասային փոխանցման էությունը: Լեզվաբանների մեծ մասը խոսքիմասային փոխանցումը համարում է բառաստեղծման մի տեսակ, իսկ որոշ լեզվաբաններ այն դիտարկում են որպես բառի գործառական պլանի երևույթ:

Հայ լեզվաբանության մեջ բառաստեղծման հիմնական միջոց է դիտվում բառակազմությունը, որը բառագիտության բաժիններից մեկն է և քննում է բառեր կազմելու եղանակներն ու միջոցները, բառակազմական կաղապարները: Հայ լեզվաբանների մեծ մասը հայերենի բառակազմության եղանակներ է համարում **ածանցումը**, երբ նոր բառ է կազմվում հիմքերից ավելացնելով բառակազմական ձևույթներ, **բարդացումը**, երբ նոր բառ է կազմվում հիմնական ձևույթների կամ առանձին բառերի՝ բաղադրությամբ, **հապավումը**, երբ սկզբահնչյունների, բառերի մասերի և այլ տարբեր միջոցներով բաղադրյալ անուններից կազմվում են բաղադրություններ: Բառաստեղծման այս ձևը մենք անվանում ենք գծային՝ բառաստեղծում (բառակազմություն):

Հայերենում բառաստեղծման ամենատարածված տեսակը գծայինն է. սա նաև հայերենի բառապաշարի հարստացման հիմնական միջոցն է: Բառաստեղծման այս տեսակը էրագործվում է միայն հիմնական և բառակազմական երկրորդական ձևույթների միջոցով, ըստ այդմ կարելի է այն անվանել ձևույթային բառակազմություն: Գծային բառաստեղծման կամ բառակազմության ժամանակ հնչյունային տեսակետից ստեղծվում են ձևով նոր բառեր, որոնք հարստացնում են այս կամ այն խոսքի մասի բառակազմը: Բառաստեղծման մյուս տեսակը ոչ գծայինն է, որի դեպքում հնչյունային տեսակետից՝ արտահայտության պլանում նոր բառեր չեն ստեղծվում. բառաստեղծումը կատարվում է խոսքիմասային փոխանցումների միջոցով: Բառաստեղծման այս տեսակի դեպքում չնայած չի փոխվում բառի հնչյունային կազմը (բառի արտաքին տեսքը, ձևը), սակայն էական փոփոխության են ենթարկվում նրա քերականական հատկանիշները (ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները), իհարկե նաև բառիմաստը: Այս դեպքում բառակազմության միջոց է հանդիսանում բառի հարացուցային ամբողջ համակարգը, որի միջոցով և ուղեկցությամբ անցում է կատարվում քերականական մի կարգից մյուսին: Խոսքիմասային փոխանցումը ոչ գծային բառաստեղծման այնպիսի երևույթն է, երբ բառը կամ բառաձևը, չլրելով արտաքին որևէ փոփոխություն, փոխում է իր խոսքիմասային արժեքը և վերածվում այլ խոսքի մասի, որի ժամանակ բառակազմական միջոց է հանդիսանում տրվյալ խոսքի մասին հատուկ հարացուցային համակարգը:

Հայերենի որակական զարգացման տարբեր շրջաններում մշտապես առկա է ոչ գծային բառաստեղծումը: Ոչ գծային բառաստեղծմամբ խոսքի մասերի համակարգում կատարվող փոխանցումները անվանում ենք **միջխոսքիմասային փոխանցումներ**: Եթե միջխոսքիմասային փոխանցման գործընթացում բառը իր մեջ համատեղում է տարբեր խոսքիմասային արժեքներ (իմաստային և քերականական առանձնահատկություններ) անվանվում է **մասնակի**, ոչ լրիվ բնույթի փոխանցում, ոչ գծային բառաստեղծման արդյունք հանդի-

<sup>1</sup> «Գծային» և «ոչ գծային» տերմինները մեզ առաջարկել է ակադեմիկոս Գ. Զահուկյանը անձնակազմ գրույցի ժամանակ, որը սիրով մենք ընդունել ենք:

սացող այսպիսի բառերը հայ լեզվաբանության մեջ կոչվում են **խոսքիմասային տարարժեք** բառեր: Հայերենում բառերի խոսքիմասային տարարժեքությունը կարող է դրսևորվել մեր լեզվի զարգացման ամբողջ գործընթացում՝ գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայերեն (այս դեպքում խնդրո առարկան քննվում է տարածամանակյա հայեցակետով): քննականաբար այսպիսի բառերը անվանում ենք **տարածամանակյա տարարժեք** բառեր: Այսպիսի բառերը մեծ թիվ են կազմում մեր լեզվում և նրանց բառաստեղծման գործընթացը ընդգրկում է երկարատև ժամանակահատված՝ հայերենի նախագրային շրջանից մինչև մեր օրերը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենում առկա են խոսքիմասային փոխանցման բազմաթիվ տեսակներ ու ուղղություններ և դրանց արդյունք հանդիսացող տարածամանակյա տարարժեք բառեր, այսպես՝

Խոսքիմասային իմաստը երկփեղկվում, եռփեղկվում է լեզվի զարգացման մյուս փուլերում (**միարժեք > տարարժեք**)<sup>2</sup>:

ա) **Ածական > ածական//գոյական** ոչ գծային բառաստեղծման տեսակը ընդգրկում է բավականին մեծ թվով բառեր: Հայերենագիտության մեջ տարածված է հետևյալ տեսակները. ածականների գոյականացման չափանիշը դիտվում է գոյականի հոլովական, հոգնակի թվի վերջավորությունների և հոդի գործածությունը այդ կարգի բառերի հետ: **Ածական > ածական//գոյական** միջխոսքիմասային մասնակի փոխանցման տեսակը հնչույթային տեսակետից նոր լեզվական միավոր չի ստեղծում, բայց գոյականի մասնակիորեն փոխանցված ածականը ստանում է ոչ միայն նոր բառային իմաստ, այլև դառնում է նոր բերականական հատկանիշների կրող: Գրաբարից ժառանգված մոտ յոթ հարյուր ածականներ կան, որոնք մեր լեզվի արդի փոյուն հանդիսանում են ածական//գոյական տարածամանակյա տարարժեք բառեր, և դժվար է ասել՝ աչ տիպի բառերի մեջ ո՞ր իմաստն է գերիշխող՝ հատկանշային, թե՛ առարկայական: Ոչ գծային բառաստեղծման արտաքին կողմին ուշադրություն դարձնելով (նոր հարացույցի ձեռք բերում)՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ավելի խոր երևույթների վրա, այսպես՝ ածականը, որը ցույց է տալիս առարկայի հատկանիշ, նախադասության մեջ սովորաբար ինքնուրույն գործածություն չունի. այն չի կարող գործածվել առանց գոյականի (հատկապես այնպիսի լեզուներում, որ բառերը քերականական ձևավորվածություն ունեն՝ ռուսերեն, լատիներեն, գերմաներեն և այլն: Մասնակի, առավել ևս լիակատար փոխանցման դեպքում այն ստանում է քերականական ինքնուրույնության, միաժամանակ նրա արտահայտած հատկանիշը առարկայանում է, ասկայն այն էապես տարբերվում է մուս գոյականներից: Իսկապես, եթե **աշակերտ, տուն** գոյականները ունեն բացահայտ արտահայտված առարկայական իմաստ, իսկ **չքնաղ, վատ** բառերը՝ հատկանշային, ապա ածական//գոյական երկարժեք բառերում առարկայական իմաստի հետ խառնված է հատկանշային իմաստը (կամ հակառակը), և դրանից թխում են այդ բառերի քերականական առանձնահատկությունները: Այսպես՝ **անառակ** բառը գրաբարում ունեցել է միայն ածականական արժեք՝ երկու իմաստով.

1. «Անամօթ, անպատկառ, անարգել, շռայլ», ինչպես՝ **Անառակ** կեանք կոչեցան, այսինքն՝ ոչ ողջախոհ (ՆՀԲ, 1, 110): 2. «Անօրէն, անկարգ, խառնակ», ինչպես՝ **Անառակ** ընթացք (Նարեկացի): Ժամանակակից հայերենում **անառակ** բառը ցուցաբերում է ածական//գոյական երկարժեքություն, ընդ որում սրա գոյականական իմաստը ձևավորվել է վերը նշված առաջին իմաստից՝ «անբարոյական, մոլորությունների անձնատուր եղած անձ» իմաստով, իսկ գրաբարյան երկրորդ իմաստը թերևս կորցրել է: Մասնակի գոյականացման հիմքը բառի փոխանցական կիրառությունն է: Այս իմաստով բառը գործածվել է շահմանափակ թվով անձի իմաստ ունեցող բառերի հետ՝ **մարդ, կին, տղամարդ, որդի** (անձի հետ առնչվող՝ **կյանք, վերաբերմունք, արքեպիսկոպոս** և այլն), և այս գործառական դաշտի նեղացումը պատճառ է դարձել առարկայական իմաստի ձևավորմանը, որը ունի հատկանշային ընդգծված երանգավորում, ինչպես՝ **Անառակի** մոտ բարոյականությունից մի խոսքի: Խոսքիմասային փոխանցմանը նպաստել է նաև **անառակ** բառի՝ որպես կոչական հաճախակի գործածությունը: Իմաստային դաշտի նեղացումը պատճառ է դարձել **ածական > ածական//գոյական** մասնակի փոխանցման, միաժամանակ **անառակ** բառը պահպանել է ածականին հատուկ՝ համեմատության աստիճաններով փոխվելու հատկանիշը՝ **անառակ—ավելի անառակ—ամենից (ամենա—) անառակ** և բնականաբար ածականական խոսքիմասային արժեքը:

Քշվատ բառը գրաբարում ածական էր «ողորմելի, եղկելի, դժվարին կամ դժբախտ վիճակում գտնվող», ինչպես՝ Ով անձն իմ թշուառ (ՆՀԲ, 1, 816): Ժամանակակից հայերենում ածականական իմաստը որոշ այլ երանգավորումներ է ձեռք բերել, բայց «նախ-

<sup>2</sup> Այս հոդվածում մենք կկատարենք տարածամանակյա տարարժեք բառերի միայն միարժեք > տարարժեք ուղղության տեսակների քննությունը:

նական իմաստով անձ» այս բառը այժմ ձեռք է բերել նաև գոյականի արժեք, չնայած ունի ածական խոսքի մասին հատուկ հատկանիշներ (ամենապոլլառ մարդն է): Խոսքի-մասային փոխանցման հիմքը ածական-գոյական կառուցումն էրառականության կրճատումն է, երբ գոյական-որոշյալը չի գործածվում և ածական-որոշիչը ներառում է նրա իմաստային և քերականական հատկանիշները: Հայերենում վիկտոր Հյուգոյի «Les Misérables» վեպի վերնագիրը թարգմանվում է ոչ թե «Թշվառ մարդիկ», այլ «Թշվառներ», որտեղ մարդիկ գոյական որոշյալի իմաստը արդեն հասկանալի է:

Բերված երկու օրինակներն էլ վերաբերում են անձին: Մեր կատարած ուսումնասիրությունները նկատելի են դարձնում մեկ այլ օրինակափոխություն՝ և անձի (մարդու) բնավորությունը (սպիրտ, լիբ, սինկբո, նպերտ, հուպիտ, դատարկապորտ, պորտաբոյթ և այլն), արտաքինը (շի, կակազ, ճաղատ, կադ, կոնատ, կուզիկ և այլն) բացասական տեսանկյունից բնութագրող բառերը մեր լեզվի պատմական զարգացման ընթացքում ընդգրկվել են խոսքիմասային փոխանցման մեջ, և հայերենի զարգացման արդի փուլում այդ բառերի մեծ մասը երկարծեք է, իսկ մի մասում էլ արդեն նկատելի է առարկայական իմաստի ձևավորումը: Հետաքրքիր է նաև, որ նշված իմաստներով բառերի մի մասը երկարծեք են նաև այլ լեզուներում, օրինակ՝ ռուսերենում (отверженный, больной, косоглазый, хромой, хромоногий, сутулый, горбатый. слепой, лысый և այլն), անգլերենում the sick, the lame, the hump-backed, the blind, the bald-headed և այլն): Փաստորեն այս իմաստներով բառերի մի մասը տարբեր լեզուներում էրկու խոսքիմասային արժեք ունեցող բառեր են, ընդ որում դրանք գրաբարում միարժեք են եղել (ածական) և միայն մեր լեզվի պատմական զարգացման ընթացքում՝ ժամանակակից հայերենում են դարձել երկարծեք՝ դրանորելով տարածամանակյա տարածքություն: Մեր կարծիքով այստեղ մեծ դեր ունի կյանքում և լեզվում գործող ամենազոր համարանության սկզբունքը:

Ածական > ածական//գոյական բառերի թիվը այսպեսով իհարկե չի սահմանափակվում. դրանք բազմաթիվ են, բազմասպիսի, օրինակ՝ ավետարանական, կրճական, թթու, ախտավոր, հուղարկավոր, բրածո, կռածո, խնկարկու, վրիժառու, հուշարար, անգրագետ, գերազանց, անապատարճակ, երազագետ, հետախույզ, ճորածին, հրազեն, ինքնաշարժ, ծովալին, այրիչ, ջնջիչ, քննիչ, հանգուցյալ և այլն:

Ածականից գոյական մասնակի փոխանցումը հայերենում սովորական երևույթ է, որը հետևյալ հիմքերով է պայմանավորված.

1) բառերի փոխանցման կիրառությունը<sup>3</sup>:

2) Ածական-գոյական կառուցումն էրառականության կրճատում. հայերենի զարգացման գործընթացում հաճախ որևէ ածական և գոյական որոշակի ժամանակահատվածում գործածվում են միասին և ստեղծվում է որոշիչ-որոշյալ մի յուրօրինակ կապակցություն: Եվ քանի որ սովյալ ածականը վերաբերում է բացառապես նույն գոյականին, լեզվի խնայողությունից ելնելով, ավելորդ անգամ սովյալ գոյականը չգործածելու, չկրկնելու համար՝ գոյական-որոշյալը չի օգտագործվում, և ածական-որոշիչը ներառում է նաև գոյականի իմաստը, որը և հիմք է հանդիսանում խոսքիմասային փոխանցմանը, որի արդյունքում ստեղծվում է տարարծեք լեզվական միավոր: Որոշ բառակապակցություններ կարող են ավելի երկար գործածվել ածական-գոյական կապակցով, մյուս մասը՝ ավելի կարճ ժամանակով:

Այսպիսի տարարծեք բառերը սովորաբար մեկ իմաստով են տարարծեք, օրինակ՝ դպրոցական երեխա > դպրոցական, քաղաքական բանտարկյալ > քաղաքական, թագադիր ասպետ > թագադիր, հետախույզ զինվոր > հետախույզ և այլն: Ըստ հետաքրքիր է, թե ինչու է կրճատվում գոյական-որոշյալը և ոչ թե ածական-որոշիչը: Նախ բառերի գոյականացումը շատ ավելի սովորական երևույթ է լեզվում, քան ածականացումը: Լեզվում յուրաքանչյուր լեզվական միավոր՝ հնչույթից մինչև նախադասություն, կարող է գոյականաբար գործածվել ինքնանվանողական դերով, և, վերջապես, եթե կրճատվի ածական-որոշիչը, բառակապակցության երկրորդ անդամի՝ գոյական-որոշյալի հետ ոչ մի իմաստային փոփոխություն չի կատարվի. ողողակի տեղի կունենան ածականի բաց թողում, և դա ոչ մի ձևով չի անդրադառնա գոյականի արժեքի վրա՝ այն չի կարող ներառել ածականի իմաստը: Իսկ հակառակ դեպքում դպրոցական երեխա կապակցության մեջ, երեխա գոյականը կրճատվելով, դպրոցական բառը ներառում է հենց երեխա բառի իմաստը և քերականական հատկանիշները, և հենց այս իմաստով է այն տարարծեք, իսկ այլ կապակցություններում (դպրոցական համազգեստ, դասագիրք) այն միմիայն ածական է: Իսկ ինչու է կրճատվել հենց դպրոցական երեխա և ոչ թե դպրոցական դասագիրք կապակ-

<sup>3</sup> Տե՛ս Ա. Պ. Հայրապետյան, Փոխանցություն և խոսքիմասային փոխանցում, ԲԵՀ, 1995, № 2, էջ 161—164:

ցությունը: 'կատելի է' ավելի շատ կրճատվում են անձեր ցույց տվող գոյականները, և ստեղծվում անձի հասարակ անուններ, այստեղ մեծ դեր ունեն գործածական հաճախականությունը և կապակցության դյուրությունը, ինչպես նաև լեզվատածողությունը և հոգեբանական գործոնը:

9) **Ստուգաբանական իմաստից հեռացում կամ իմաստների փոխհարադրում.** Խոսքիմասային փոխանցման գործընթացում մեծ դեր ունի նաև բառիմաստի գործոնը. տվյալ դեպքում բառը ամբողջությամբ հեռանում է նրա ճակատական, ստուգաբանական իմաստից, և ձեռք բերած նոր, միայլ իմաստը կարող է երկարժեքության պատճառ դառնալ, օրինակ՝ **որվական** բառը նախապես ունեցել է «որուին հատուկ՝ վերաբերող» իմաստը, այժմ գոյական է «մեռած, բացակա կամ հեռավոր մարդու տեսիլք կամ երևակայության մեջ պատկերացող երևույթ», **հրաքան** «հուր սփռող» (սծ.) — «ձեռքի գեղք» մետաղե փողով և փայտե կոթով՝ գեղակներ արձակելու համար» (գոյ.) և այլն:

4) **Իմաստային ներդրողական առկայություն և բառագործածության որոշակի սահմանափակում:** Գրաբարից ունենք որոշակի ածականների խումբ, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում գործածվել են միայն սահմանափակ թվով գոյականների հետ, օրինակ՝ **ապստամբ մարդ՝ գյուղացի, տղամարդ, բանվոր** և այլն: Գրաբարյան ածականի արտահայտած իմաստը հնարավորություն է տվել գործածվելու միայն անձի իմաստ արտահայտող, այն էլ սահմանափակ թվով բառերի հետ: Այդպիսի ճանաչարհ է անցել նաև **հաճախարարական** գրաբարյան ածականը, որը գործածվել է **թուղթ, երկտող, ճամպ** և այլ գոյականների հետ, ի վերջո դարձել է երկարժեք՝ ներառելով դրանց իմաստը և քերականական հատկանիշները:

5) **Նոր լրացուցիչ իմաստի ձեռքբերում կամ բառիմաստի ընդլայնում:**

6) **Բառիմաստի ներացում:**

7) **Փոխանցում հոմանիշային շարքով,** երբ հոմանիշներից որևէ մեկը, կամ երկուսը գրաբարում արդեն տարածք են, կամ մեկը ձեռք է բերում տարածքություն և այդպիսի հոմանիշների շարքը (իմաստային նույն դաշտում գտնվելը, իմաստների մոտ լինելը) ամբողջությամբ կամ մեկի, կամ երկուսի բացառությամբ) ձգտում է տարածքության արդի հայերենում, ինչպես՝ **սիկլոթ—դատարկապարտ—բափառաշքիկ—պորտաբույծ, հտպիտ—խեղկատակ—ծաղրածու—միմոս:**

8) **Փոխաբերական կիրառությունը** նույնպես կարող է տարածքության հիմք հանդիսանալ:

9) Գրաբարյան ածականների մի մասը արդի հայերենում վերածվել են **գիտաբաների,** բրի հիմքով ածական/գոյական երկարժեքություն են ձեռք բերել:

10) Գրաբարյան մի շարք ածականներ արդի հայերենում երկարժեքություն ունեն անվանակարգության հիմքով. դրանք մասնակիորեն փոխանցվել են գոյականի և գործածվում են որպես անձերի հատուկ անուններ:

11) Որոշ գրաբարյան ածականների փոխանցման հիմքը նրանց՝ որպես կոշական գործածվել է՝ **թշվառական, վեհափառ, սրբազան** և այլն:

12) **Նույն կամ մոտ իմաստով գոյականի առկայությունը** լեզվում նույնպես կարող է խոսքիմասային փոխանցման հիմք հանդիսանալ:

13) Որոշ գրաբարյան ածականներ փոխանցվել են գոյականների **արտալեզվական երևույթների ազդեցության** հիմքով (**սպիտակ, կարմիր**):

14) Խոսքիմասային փոխանցման հիմք է հանդիսանում նաև լեզվում գործող **համաբանության սկզբունքը:** Համաբանությունը մեծ դեր ունի հասարակական կյանքում, ոչ պակաս, նույնիսկ ավելի հզոր է նրա դերը լեզվի մեջ:

15) Խոսքիմասային փոխանցման հիմք է հանդիսանում նաև լեզվի **ոճական առանձնահատկությունները,** մասնավորապես մեծ դեր ունի լեզվի խնայողության գործոնը, բաների անհարկի գործածությունից բեռնաթափվելու անհրաժեշտությունը:

Ինչպես վկայում են լեզվական փաստերի համակողմանի ուսումնասիրությունը ածական > ածական/գոյական խոսքիմասային փոխանցման տեսակը (մասնակի գոյականացում) և երկարժեքությունը լեզուներում, հատկապես մեր լեզվում մշտապես գործող լեզվական երևույթ է, որը պայմանավորված է մեր լեզվի պատմական զարգացմամբ:

բ) **Ածական > ածական/մակբայ** ոչ գծային բառաստեղծման տեսակը նույնպես ընդգրկում է բավականին մեծ թվով բառեր մեր լեզվում: Հայերենում հաճախ ածականը և մակբայը ձևաբանորեն տարբերված չեն՝ **գեղեցիկ աղջիկ—գեղեցիկ խոսել, վատ եղանակ—վատ աշխատել** և այլն: Գրաբարյան բազմաթիվ ածականներ ժամանակակից հայերենում խոսքիմասային փոխանցումով ածական/մակբայ տարածքություն են դրսևորում, իսկ ժամանակակից հայերենում ածական/մակբայ երկարժեքությունը զանգվածային բնույթ է կրում: Հարց է առաջանում՝ ո՞րն է այն երևույթի հիմքը, իսկ հիմքերը հետևյալներն են.

1) Հատկանիշի գաղափարի ընդհանրությունը. հայերենում ածականն ու մակբայը դրսևորում են խոսքիմասային ընդհանուր իմաստի մասնակի ընդհանրացման իմաստային եզրեր. երկու խոսքի մասերն էլ արտահայտում են հատկանիշի գաղափար. ածականը՝ առարկայի, մակբայը՝ գործողության (կամ հատկանիշի):

2) Թարահյուսական կիրառությունը. հատկանիշ ցույց տալու հիմքով, ածականը հա-հախ հանդես է գալիս մակբայի կիրառական ոլորտում՝ այն հանդես է գալիս որպես պարագա, որը մակբայի շարահյուսական հատկանիշն է, իսկ ածականինը՝ որոշչային կիրառությունը: Ընդհանրապես հայ լեզվաբանության մեջ որոշ լեզվաբաններ (Մ. Աբեղյան, Մ. Ասատրյան և այլն) այն կարծիքն են հայտնում, որ երբ ածականները գործածվում են որպես պարագա, դիտվում են իբրև մակբայներ, իսկ որոշ լեզվաբաններ (Գ. Սևակ) գտնում են, որ ածականը անկախ այն բանից գոյականի, թե բայի հետ է գործածվում, մնում է ածական և մակբայ համարվել էլ կարող:

Մեր մտեցումը այս հարցի վերաբերյալ հետևյալն է. բառի ձևավորվածության տեսակետից արդի հայերենում ածականը և մակբայը հաճախ չեն տարբերակված, ավելին՝ երկուսն էլ ունեն համեմատության աստիճաններով փոխելու ունակություն: Սակայն գրաբարում որոշակի ձևաբանական տարբերություն կար ածականի և մակբայի միջև. միավանկ ածականները որոշչային կիրառության դեպքում գոյականի հետ համամայնեցվում էին թվով և հոլովով՝ և նախադաս, և նտադաս դիրքով, իսկ բազմավանկ ածականները՝ նտադաս դիրքով: Սակայն լեզվի պատմական զարգացման հետևանքով արդի հայերենում ածականի և գոյականի համամայնեցումը վերացել է: Փաստորեն ածականի և մակբայի տարբերակումը արդի հայերենում կատարվում է իմաստային և շարահյուսական ոլորտներում: Արդի հայերենում կան գրաբարից ավանդված մոտ չորս հարյուր ածականներ, որոնք միարժեք են եղել գրաբարում, իսկ արդի հայերենում երկարոճք են: Գրականրելով տարածամանակյա տարածքություն՝ այս բառերը ոչ միայն ցույց են տալիս առարկայի հատկանիշ՝ որոշչային կիրառությամբ, այլև սրանք ձեռք են բերել գործողության (կամ հատկանիշի) հատկանիշը ցույց տալու կարողություն և ոչ գծային բառաստեղծմամբ մասնակի փոխանցում են կատարել՝ դառնալով նաև մակբայներ: Հետաքրքիր է, որ այս բառերը ածականների մի տեսակից են վերաբերում՝ որակականներին և ձեռք են բերում միայն ձևի պարագայի շարահյուսական կիրառություն: Ոչ գծային բառաստեղծմամբ գրաբարյան միարժեք ածականները մասնակի փոխանցումով հարստացրել են արդի հայերենի միայն ձևի մակբայների համակարգը: Խոսքիմասային մասնակի փոխանցում կատարած գրաբարյան ածականները պահպանել են իրենց բառիմաստները, դեռ ավելին՝ սրանք փոխանցվել են ամբողջ իմաստային դաշտով: Այս բառերի մեծ մասի մակբայական արժեքը ձևավորվել է գրաբարյան ածականի հիմնական, հաճախ միակը հանդիսացող իմաստից: Ածական > ածական/մակբայ տարածամանակյա տարածք բառեր են՝ հիվանդագին, հրեպարտ, միամիտ, ձանձրայի, մազապործ, մեծաշուք, առույգ, անվստահ, անտեր, արտասովախառն, բարեկեցիկ, դժվար և այլն: Եթե արմատական և բարդ ածականներից խոսքիմասային փոխանցման միջոցով ձևի մակբայների առաջացումը հայերենի համար օրինաչափ երևույթ է, և սա մակբայ խոսքի մասի հարստացման աղբյուրներից մեկն է, ապա որոշ ածանցավոր ածականներից մակբայների առաջացումը մեր լեզվի համար օրինաչափություն համարել չենք կարող, քանի որ ածականակերտ ածանցի առկայությունը հանդիսանում է խանգարիչ գործոն փոխանցման գործընթացում: Այսպես՝ հայերենում -ական, -ավոր անանցներով ածականից մակբայ խոսքիմասային տարածամանակյա տարածք բառերը մեծ թիվ չեն կազմում, քանի որ -ական, -ավոր ածանցները հայերենի զարգացման տարբեր փուլերում ածականակերտ ածանց են, սակայն կան բառեր, որոնք արդի հայերենում ոչ միայն առարկայի, այլև գործողության հատկանիշ են ցույց տալիս, օրինակ՝ հանդիսավոր բառը գրաբարում միարժեք ածական էր, ինչպես՝ Զարդարումն քաղաքավարութեան, հանդիսաւոր գործք (ՆՀԲ, 2, 54): Ժամանակակից հայերենում՝ մեղուների սնունդի երգը հիացնում էր հարսանեկան հանդիսավոր մկագածություն (Ստ. Զորյան).— ած.: Երկու քայլից, սակայն, ետ դարձավ և ավելացրեց հանդիսավոր ու վճռական (Ստ. Զորյան).— մկբ.:

Որոշ բառերի իմաստների ընդլայնում է կատարվել, որ հիմք է հանդիսացել ածականից մակբայ խոսքիմասային մասնակի փոխանցման, օրինակ՝ դիվական, բառը գրաբարում ածական էր՝ «դեկն հատուկ՝ վերաբերող, աստանայական» իմաստով: Այս իմաստը կախյալանվել է ժամանակակից հայերենում, սակայն բառը ձեռք է բերել նաև դեկն հատուկ հատկանիշների՝ «չար, ճեղք» իմաստ, որի շնորհիվ դարձել է երկարոճք, ինչպես՝ դիվական ծիծաղ, բայց նաև՝ ծիծաղել դիվական: Ոչ գծային բառաստեղծման հիմքը ածականի և մակբայի արտահայտած խոսքիմասային իմաստի մասնակի ընդհանրությունն է, իսկ տարբերակվում են դրանք շարահյուսական մակարդակում:

զ) Ածական > ածական/կապ տարածամանակյա տարածքության օրինակ նույնպէս կա մեր լեզվում: Ընդհանրապէս կապերը հակադրվում են նյութական իմաստ արտահայտող բառերին՝ մասնավորապէս փոխանցման տվյալ տեսակի դէպքում ածականն այն բանով, որ եթէ վերջինս ունի ընդգծված բառիմաստ, ձևարանական առանձնահատկություններ և շարահյուսական կիրառություններ, ապա կապը ցույց է տալիս տարբեր հարաբերություններ՝ արտահայտելով քերականական իմաստ (չունի բառիմաստ), գուրկ է ձևարանական առանձնահատկություններից (այն թեթվող չէ) և շարահյուսական կիրառություններից (նախադասության անդամ է դառնում կապային խնդրի հետ միասին): Եթէ ածական > ածական/գոյական ոչ գծային բառատեղծման ժամանակ նոր ձեռք բերած խոսքիմասային արժէքը անպայմանորեն առնչվում էր գոյականի հարացուցային համակարգի ձեռք բերման հետ, և փոխանցման գործընթացը կատարվում էր դրա ուղեկցությամբ, ապա այս դէպքում ածականի բառիմաստը և քերականական հատկանիշները հանդես են գալիս որպէս խանգարիչ գործ: Ը կապի փոխանցման գործընթացում: Որպեսզի գրաբարյան ածականը մասնակիորեն փոխանցվի կապի, անհրաժեշտ է, որ այն այս կամ այն չափով գրկվի վերոհիշյալ հատկանիշներից: Լեզվաբանության մեջ ընդունված տեսակետ է, որ կապերն առաջանում են նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի՝ նրանց նյութական իմաստի ու քերականական հատկանիշների կորստով և դրան զուգահեռ՝ ընդգծված հարաբերության իմաստի ձեռք բերմամբ և զարգացմամբ: Ընդ որում, ոչ քոլոր նյութական իմաստ արտահայտող բառերից կարող են կապեր առաջանալ, հիմնականում կապերի են փոխանցվում (մասնակի կամ լիակատար) այն բառերը, որոնց մեջ որոշ չափով արդեն առկա է հարաբերության իմաստը: Նկատվում է նաև, որ ոչ գծային բառատեղծման կապերի առաջացման հիմնական եղանակներից մեկն է, եթէ ոչ միակը, որի հիմքը նյութական իմաստ արտահայտող բառերի բառային և քերականական հատկանիշների յուրօրինակ կորուստն է և հարաբերության իմաստի ձեռք բերումն է մեր լեզվի պատմական զարգացման գործընթացում: Համեմատ թաղը գրաբարում միայն ածական էր «գուրկվող, հարմար, համահման, հավասար, նույնպիսի» իմաստով, ինչպես՝ Ոչ գտան համեմատ դասերացն յուրքա ազնուագոյնը: Ոչ գտի գոբ համեմատ ինձ պարտաւոր (ՆՀԲ, 2, 28): Համեմատ թաղը արդի հայերենում պահպանել է գրաբարյան ածականի հատկանշային իմաստը «իրար պատշաճող, համապատասխան»՝ համեմատ գույզեր, ձևարանական առանձնահատկությունը՝ համեմատության աստիճաններով փոխվելու կարողությունը՝ նրանք ամենահամեմատ գույզն են աշխարհում, որոշչային շարահյուսական կիրառությունը (ինչպիսի՝ գույզ՝ համեմատ): Սրան զուգահեռ համեմատ թաղը արդի հայերենում նաև կապ է և ցույց է տալիս գործողության կատարման հիմունքը՝ սովորության կամ մի բան մի բանի համապատասխան լինելու հարաբերության հիմքով՝ սովորության համեմատ, հասակի համեմատ, կարողության համեմատ և այլն:

Ըստ գործածության, համեմատ թաղը կարող է գործածվել կապվող բառից և՛ առաջ, և՛ հետո՝ հանդես գալով և՛ որպէս նախադրություն, և՛ որպէս ետադրություն՝ սովորության համեմատ/համեմատ սովորության, և հակված է դեպի սեռական խնդրատության:

դ) Գոյական > գոյական/ածական ոչ գծային բառատեղծումը նույնպէս մեր լեզվում տարածված երևույթ է: Հայտնի է, որ գոյականները ցույց են տալիս առարկաներ կամ առարկայի գաղափար, իսկ ածականները՝ հատկանիշ, որոնք իրարից բացարձակապէս տարբեր երևույթներ են, և դժվար է գտնել հատկող որևէ կետ այս երկուսի միջև: Մեր կարծիքով գոյականը և ածականը իրար հետ առնչվում են բավականին անտեսանելի, ներքին կապով: Իհարկէ, գոյականի խոսքիմասային արժէքը առարկայի գաղափարն է, բայց անմխտելի է նաև այն փաստը, որ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն չունի որևէ առարկա առանց իր հատկանիշների, այսինքն՝ մեզ շրջապատող աշխարհի առարկաներն ունեն որոշակի հատկանիշներ, որոնք բնութագրում են հենց այդ առարկան: Գոյական խոսքի մասը մատնանշում է ադ առարկան, իսկ ածականը՝ հատկանիշները, որոնք բնութագրում են այդ առարկաները, երևույթները, իրերը և այլն: Ահա այս հանգամանքը շինման եզրեր է առաջացնում առաջին հայացքից ոչ մի ընդհանրություն չունեցող երկու խոսքի մասերի միջև: Խոսքիմասային փոխանցման գործընթացը առաջին պլանն է մղում այս հատկող պահը, և, որպէսզի գոյականը մասնակիորեն փոխանցվի ածականի, այն պետք է ձեռք բերի նրա ձևարանական առանձնահատկությունները (համեմատության աստիճանների կարգը) և շարահյուսական կիրառությունները. այս հարցում հայերենի գոյականն ու ածականն ունեն գործածական նմանություն, հայերենի գոյականների մեծ մասը նախադասության մեջ դառնում է որոշիչ (գոյական-որոշիչ), որը ածականի շարահյուսական հիմնական կիրառությունն է: Գոյական > գոյական/ածական ոչ գծային բառատեղծման և դրանով պայմանավորված տարածամանակյա տարածքության հիմքերն են՝

1. Ածական-գոյական կալում բառակապակցության կրճատում և վերականգնում: Տա-

խաժամանակյա տարածքը այս տիպի բառերը մեր լեզվի զարգացման գործընթացում ունեցել են խոսքիմասային պատկանելության տարբեր փուլեր՝ ածական/գոյական>գոյական>գոյական/ածական: Ընդ որում առաջին՝ ածական/գոյական>գոյական փուլը նրանք ունեցել են մեր լեզվի զարգացման նախագրային փուլում և գրաբարյան բառարաններում: սրանք արձանագրված են որպես գոյականներ, որպես կանոն սրանց գոյականացումը կատարվել է ածական-գոյական բառակապակցության կրճատման հիմքով, իսկ տարածքությունը ձեռք բերումը ա.ս բառակապակցության վերականգնման հիմքով: Սրանք հիմնականում անձերի հասարակ անուններ են և բնութագրում են նրանց տարբեր կողմերով, օրինակ՝ **աստվածապաշտ, ազգական, թղթատար, հյուրընկալ, դեկավար, լաճարար, մսավաճառ, շինական, կտավագործ, ճարտասան** և այլն: Նաև իրեր մատնաճշող բառեր են՝ **ձեռատուփ, ձուխոտ, չորքոտանի, մսահան** և այլն: Սրանց խոսքիմասային արժեքները երկփեղկվել են ժամանակակից հայերենում: Հաճախ այս կայուն բառակապակցությունները կարող են գործել երկար ժամանակ, նաև դրանք կարող են գոյություն ունենալ կարճ ժամանակահատվածում և կրճատվել, հետագայում նաև՝ վերականգնվել:

2) **Որոշչային կիրառության ընդհանրության հիմք:** Տարածմանակյա տարածքության հիմք է հանդիսանում գոյականի՝ որպես գոյական-որոշիչ գործածվելը, իսկ նրա հետագա ակտիվացումը գոյականին թաշ-թաշ մտեցնում է ածականին, իսկ հետագայում ոչ գծային բառաստեղծմամբ ստեղծվում է նոր լեզվական միավոր, որը ներառում է իր մեջ արդեն ոչ միայն գոյականի, այլ նաև ածականին հատուկ խոսքիմասային իմաստ և կայուն քերականակն արժեքներ: Այստեղ մեծ դեր է խաղում նաև բառիմաստը՝ իր ամբողջ ծավալով, որտեղից առանձնացվում է առարկա բնութագրող հատկանիշներից որևէ մեկը կամ մի քանիսը, և գոյականը ստանում է որոշչային կիրառություն, օրինակ՝ **անձրևաշիթ** յառը գրաբարում գոյական էր «անձրևի շիթ» կաթիլ» իմաստով, որը պահպանվել է ժամանակակից հայերենում, սակայն այժմ բառը ունի «անձրևի կաթիլի նման» ածականական իմաստը, ինչպես՝ **Անձրևաշիթ** արցունքներ էին հորդում նրա աչքերից: Կամ **քարալեռ** բառը, որը և գրաբարում, և արդի հայերենում գոյական է «քարեղեն լեռ» իմաստով, քայց որ ձեռք է բերել նաև «լեռներից ու քարերից կազմված, լեռնանման» ածականական իմաստը, ինչպես՝ **քարալեռ վայր, տեղանք** և այլն: Փաստորեն այս և այլ գրաբարյան գոյականներ արդի հայերենում բառիմաստի յուրօրինակ փոփոխությամբ և շարահյուսական կիրառությամբ ձեռք են բերել նաև ածականակն արժեք՝ ամրագրված ձևաբանական հատկանիշով՝ Սա Հս.յաստանի **ամենաքարալեռ վայրն է:**

3) **Իմաստափոխության հիմքով** որոշ գրաբարյան գոյականներ արդի հայերենում գոյական/ածական տարածքություն ունեն, օրինակ՝ **կախաց** բառը գրաբարում գոյական էր՝ «կախադան» իմաստով, ինչպես՝ Ի **կախացի** քերեցին զկողան երկաթի քերջօք (ՆՀԲ, 1, 1084): Ժամանակակից հայերենում նույնպես գոյական է «որևէ բան կախ տալու հարմարանք», «ձմեռվա համար մրգեր» հատկապես խաղող կախելը» իմաստով: Սակայն նաև ածական է «կախված, կախ տված» իմաստով, օրինակ՝ **կախաց խաղող, տանն:** Իմաստափոխության հիմքով արդի հայերենում գոյական/ածական տարածքություն են դիրսևորում նաև **Շողակաթ, Մարտիրոս, պարթև, կոկան** բառերը:

Ե) **Գոյական > գոյական/կապ** ոչ գծային բառաստեղծման հիմքերի ուսումնասիրությունը անմիջականորեն առնչվում են ածական > ածական/կապ տեսակին: Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերին պատկանող ոչ բոլոր բառերը կարող են փոխանցվել կապերի. **սեղան, աթոռ** գոյականները լեզվի զարգացման հազարավոր տարիներ հետո անգամ չեն կարող մասնակի կամ լրիվ փոխանցվել կապերի շարքը, այն պարզ պատճառով, որ դրանք կոնկրետ առարկաների անուններ են: Գոյականներից կապեր կարող են առաջանալ միայն վերացարկված հարաբերության իմաստ ունեցող գոյականներից: Անմիջաբար գոյականների ուղիղ ձևերից առաջացած կապերը սակավաթիվ են՝ **չափ, տեղ, տակ, ժամանակ, մեջ** (հատկապես շատ են գոյականների հոլովաձևերից առաջացած կապերը): Որպեսզի գոյականը փոխանցվի կապի, անհրաժեշտ է, որ կորցնի իր նյութական իմաստը և ձեռք բերի հարաբերության իմաստ, որը այս կամ այն չափով կա բառիմաստում, և անպայմանորեն դրան զուգահեռ գրկվի գոյականի հարացուցային համակարգով փոխվելու ունակությունից և շարահյուսական կիրառություններից՝ նախադասության լիիրավ անդամ դառնալու կարողությունից: Ահա այս բոլորի յուրօրինակ փոփոխություն որոշ գրաբարյան գոյականներ մեր լեզվի ներկա փուլում այս կամ այն չափով և գոյական են և կապ: **Չափ** բառը գրաբարում գոյական էր «քանակ ըստ տարածության, կշռի, թվի, սահման, եզր, եղանակ, պայման» ընդհանուր իմաստով, օրինակ՝ Առանց օրիցի ամեն սին, և **չափու:** Երկայն է **չափ** երկրի Ոչ գոյ **չափ** զարդու նորա կամ ազգաց ԵՊԿԱ (ՆՀԲ, 2, 572): Գրաբարում որոշ չափով նկատելի էր կապային արժեքի աշխու-

ծացում, օրինակ՝ Իշխեցին զևսմամու նորա՝ երկնից և ամպնք չափ փակել (նույն տեղում, 573):

Մեր լեզվի պատմական զարգացումը հասցրեց կապային արժեքի ամրագրմանը չափ գրաբարյան գոյականի մեջ, չնայած հայերենի արդի փուլում այն ունի նաև գոյականի խոսքիմասային արժեք «առարկայի քանակը որպես միավոր, չափման միավոր» իմաստով, ինչպես՝ Ային նպարեղենի խանութը բաց արեց, որի մեջ կշեռք և չափ չկա (ՎՋ): **2**ափ բառը պահպանել է գոյականի հարացուցյով փոխվելու ունակությունը և շարահյուսական կիրառությունները, միաժամանակ կապ է և ցույց է տալիս չափի հարաբերություն «համեմատ, մոտավորապես» իմաստով, ինչպես՝ Այդ հարցերը խելագարության չափ վրդովեցնում էին խեղճ օրիորդին (Ռ): Նա յուր հետ ուներ ընդամենը հինգ հարյուրի չափ զորք (Մ): Բնագրային օրինակներից երևում է, որ չափ բառը տարածմանակյա տարածք է լեզվական միավոր է:

զ) **Մակբայ** > **մակբայ/ածական** մասնակի փոխանցման տեսակը և դրանից բխող տարածմանակյա տարածքությունը՝ հականիշի գաղափարի ընդհանրությամբ, մեր լեզվում գործող իրողություն է: Գրաբարյան մոտ երկու տասնյակ մակբայներ բառագործածության ընթացքում ցույց են տալիս ոչ միայն գործողության հատկանիշ (կամ հատկանիշի հատկանիշ), այլև խոսքիմասային մասնակի փոխանցմամբ նաև առարկայի հատկանիշ, չնայած այս տիպի բառերի մակբայական կիրառությունը այնուամենայնիվ գերիշխող է:

**Գաղտուկ** բառը գրաբարում «գաղտնի, գաղտնաբար» իմաստով մակբայ էր, ինչպես՝ Ուսուցաներ **գաղտուկ**: Գնացին **գաղտուկ** (ՆՀԲ, 1, 525): Միջին հայերենում մակբայ > **ածական** լիակատար փոխանցումով **ածական** էր «գաղտնի, ծածուկ» իմաստով, ինչպես՝ Ուներդ աղեղունք լարես՝ **գաղտուկ** նետերով զարնես (ՄՀԲ, 1, 177): Արդի հայերենում նորից վերականգնվել է նրա մակբայական արժեքը (**գաղտուկ զրոցել, խոսել**), որին զուգահեռ գործում է **ածականականը (գաղտուկ նամակ, զրույց)**: **Մակբայ** > **մակբայ/ածական** տարածմանակյա տարածք բառեր են շեշտակի, **պատաս-պատաս, ցրիվ, բռնի, քերանացի, գլխիվայր, թեթևակի** և այլն:

ե) **Մակբայ** > **մակբայ/գոյական** մասնակի փոխանցման տեսակը մեր լեզվում տարածված չէ, և տարածմանակյա տարածքություն դրսևորողը միայն **այսօր** բառն է ներկայացնում: **Այսօր** բառը գրաբարում միարժեք մակբայ էր, ինչպես՝ **Այսօր մաքուր հոգեկիր** և վաղի մոլի խելյազար: Երբեմն **այսօր** բառը հող էր ստանում, նույնիսկ հողովվում էր, սակայն պահպանում էր իր մակբայի խոսքիմասային արժեքը, ինչպես՝ Միճշեա այսօրդ առաջի կայ: Տուր իճճ **այսօր**, և առ քեզ զվաղի (ՆՀԲ, 1, 96): Գոյականական արժեքի հետքերը ի հայտ են գալիս դեռևս գրաբարից, ընդ որում միջին հայերենում պահպանվել է մակբայական արժեքը: Ինչևէ արդի հայերենում **այսօր**՝ բառը արձանագրվում է՝ որպես **մակբայ/գոյական** երկարժեք բառ:

Հարգելով լեզվաբանների կարծիքները՝ մենք գտնում ենք, որ **այսօր** բառը ոչ գծային բառատեղծման տիպական օրինակ է. **մակբայ** է, թե՞ **գոյական**: Մի բան հաստատ պարզ է, որ **այսօր** բառը արդի հայերենում **մակբայ/գոյական** երկարժեքություն է դրսևվորում: Ծատ կարևոր է փոխանցման ուղղության ճշտումը՝ **մակբայից** գոյական, թե՞ **գոյականից** մակբայ: Ուսումնասիրությունները վկայում են, որ **այսօր** բառը գրաբարում **մակբայ** էր: Ընդ որում, նկատվում էին հող ստանալու և հողովվելու կարգերի ձևեր քերում, իսկ դրանք գոյականական կարգեր են, նշանակում է՝ գոյականի խոսքիմասային արժեքը ձեռքբերովի է, սակայն անգամ արդի հայերենում լիակատար գոյականական արժեք չունի, այսպես՝ **այսօր** բառը հրգնակի թիվ չունի, այն չի կարող գործածվել քանակական թվականների հետ, որոշիչներ չի կարող ստանալ, սակայն հողովվում է ժամանակ ցույց տվող գոյականների նման **-վա** հողովմամբ՝ **այսօրվա—այսօրվանից**, կարող է ստանալ հողեր: Ի հակալիշի **այսօր** բառի, երեկ բառը արդեն գրաբարում **մակբայ/գոյական** երկարժեքություն ուներ, ինչպես՝ Առ երեկս քաշխեսցես կերակուրս,— մկբ.: Զլոյս մաքրեցեր, և մթացուցեր **զերեկ** (ՆՀԲ, 1, 675),— գոյ.: **Այսօր** բառի խոսքիմասային արժեքը երկփեղկվել է արդի հայերենում, ընդ որում **մակբայական** արժեքը վճռականորեն գերիշխող է: **Այսօր** մակբայի մասնակի գոյականացմանը մեր կարծիքով նպաստել է երեկ **մակբայ/գոյական** տարածք բառի առկայությունը գրաբարում և ժամանակակից հայերենում: Այստեղ նույնպես գործել է համաքանության սկզբունքը:

ը) **Մակբայ** > **մակբայ/շաղկապ** տեսակը վկայում է այն փաստը, որ ոչ գծային բա-

<sup>4</sup> Հայ քերականագիտության մեջ **այսօր** բառի խոսքիմասային պատկանելությանը վերաբերող տարբեր կարծիքներ կան: Տե՛ս Մ. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 382, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 388, Ս. Աբրահամյան, 2թեքվող խոսքի մասերը..., էջ 259:

հմաստեղծումը հայերենում ընթանում է ոչ միայն նյութական իմաստ ունեցող բառերի, այլև շօթքվող խոսքի մասերի միջև: Մեր լեզվում կան այլապես, միգնդեռ մակբայ շարկապ տարարծեք բառերը, որոնք գրաբարում միարծեք մակբայներ են, իսկ արդի հայերենում հանդես են գալիս երկփեղկված արծեքներով: Այլապես բառը գրաբարում մակբայ էր «այլաբար, ուրիշ կերպ, տարբեր ձևով» իմաստով, ինչպես՝ Եւ ես ոչ այլապես դատիմ, բայց եթէ որպէս հայր (ՆՀԲ, 1, 83): Միջին հայերենում պահպանել է խոսքիմասային արծեքը: Արդի հայերենում այլապես բառը հանդես է գալիս երկփեղկված արծեքով, ինչպես՝ հայց որդին այլապես էր մտածում (Րաֆֆի),— մկբ.: Ծաղկապը արտահայտում է «հակառակ դեպքում, ապա թե ոչ» քերականական իմաստը, օրինակ՝ Անպատճառ արի, այլապես՝ կկարծեն, որ նեղածն են ինձանից (Նար-Դոս):

Այս բառերի մասնակի փոխանցման հիմքը քերականական իմաստի աշխուժացումը, վերացարկումը, խորացումն է: Փոխանցման գործընթացին խթանում է այն հանգամանքը, որ երկուսն էլ շօթքվող խոսքի մասեր են, սակայն խանգարում է մակբայի շարահյուսական կիրառությունները և նախադասության անդամ լինելու հանգամանքը: Սակայն երկուսի՝ քերականական իմաստ ունենալու հանգամանքը հնարավորություն է տալիս այդ բառերին, պահպանելով գրաբարյան բառիմաստը և քականաբար խոսքիմասային արծեքը, մասնակիորեն փոխանցվելու շարկապների՝ զրկվելով շարահյուսական կիրառությունից՝ նախադասության անդամ դառնալու ունակությունից:

Մինչև այժմ մեր քննարկած ոչ գծային բառաստեղծման տեսակները ցույց են տալիս, որ խոսքիմասային փոխանցման ոլորտն ընդգրկված բառերը պահպանում են իրենց մայր խոսքիմասային արծեքը և արդի հայերենում ձեռք են բերում ևս մեկը, որը կարող է գերիշխել, կամ ավելի թույլ արտահայտվել, կամ հավասարապես հանդես գալ մայր խոսքիմասային արծեքին գուգահեռ:

Սակայն մեր լեզվում կան տարածամանկյա տարարծեք բառեր, որոնք ամբողջությամբ կորցնում են մայր խոսքիմասային արծեքները և ժամանակակից հայերենում հանդես են գալիս երկարծեք բառեր՝ նոր խոսքիմասային արծեքներով՝ բնութագրելով տվյալ բառին:

ա) **Գոյական > ածական/մակբայ** ոչ գծային բառաստեղծման ժամանակ տարարծեքությունը դրսևորող բառը ամբողջությամբ կտրում է կապը մայր խոսքի մասից և փոխարենը ձեռք է բերում այլ խոսքի մասերի արծեքներ: Այսպես՝ **խորթ** բառը գրաբարում գույական էր «ոչ հարազատ որդի» իմաստով: Գրաբարում գոյականական արծեքի առկայությունը նախագրային շրջանում թերևս հաճախակի գործածությունն ունեցած **խորթ** որդի ածական-գոյական կայուն բառակապակցության կրճատման արդյունքն է: Այդ բառակապակցությունը գործածական էր նաև գրաբարում, ինչպես՝ Որ է որդւոյն **խորթ**, կամ ըզ-**խորթուն** դուստր (ՆՀԲ, 1, 974): Սակայն գործածելով **խորթ** բառը գրաբարում՝ արդեն հասկանալի է, որ խոսքը վերաբերում էր զավակին (որդուն, աղջկան), ինչպես՝ **Խորթն** ընտրեալ լինէին ի ճշմարիտ որդւոց (նույն տեղում): Արդեն գրաբարում նկատելի էր ածական-գոյական կայուն բառակապակցության վերականգնում և **խորթ** բառի ածականական արծեքի աշխուժացում: Միջին հայերենում արդեն **խորթ** բառը կորցրել էր գոյականական արծեքը: Ժամանակակից հայերենում **խորթ** բառը երկարծեք է, ընդ որում կորցրել է մայր խոսքիմասային՝ գոյականական արծեքը, իսկ որպես ածական գործածվում է լայն իմաստային դաշտով, ոչ միայն **խորթ** զավակ, այլ **խորթ հայր, մայր, եղբայր, քույր** և այլն: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ ստեղծվում են մի քանի կայուն բառակապակցություններ՝ **խորթ մայր, խորթ հայր, խորթ որդի, խորթ եղբայր, խորթ քույր** և այլն, և սրանք թուրով էլ ունեն թերևս գործածության միևնույն հաճախականությունը, և եթե անգամ կատարվի բառակապակցության կրճատում, ապա միայն խոսքային իրադրությունից հնարավոր կլինի զանազանել, որ կոնկրետ բառակապակցության կրճատում է կատարվել: Լեզվաբանության մեջ այս դեպքում խոսքը կվերաբերի ավելի շատ փոխանունության, քան խոսքիմասային փոխանցմանը: Ինչնէ, **խորթ** բառը այս ճանապարհով փոխանցվել է ածականի, ունի ընդգծված հատկանշային իմաստ, միաժամանակ այն մակբայ է հատկանիշի գաղափարի ընդհանրության և շարահյուսական կիրառության հիմքով, ինչպես՝ Տղան **խորթ** նայեց դիմացի տեսարանին (Մամուլ): **Գոյական > ածական/մակբայ** մասնակի փոխանցումներ են կատարել, և տարածամանակյա տարարծեքություն են դրսևորում նաև **բունբաջ, կրկիտ** բառերը, որոնց փոխանցման հիմքը բառիմաստի փոփոխությունն է:

բ) **Գոյական > մակբայ/կապ** խոսքիմասային մասնակի փոխանցմամբ տարածամանակյա տարարծեք բառերի թիվը սահմանափակվում է շատ քիչ օրինակներով: Այսպիսի ցայտուն օրինակ է **առաջ** բառը, որը գրաբարում գոյական էր «տեղի, ընթացքի, իրերի սկիզբը» իմաստով, ինչպես՝ **Առաջ** նորա և զվերջ նորա: Ընթացեալ **լառաջ** (ՆՀԲ, 1, 287): Միջին հայերենում պահպանել է գոյականական արծեքը: Արդի հայերենում **առաջ**

բառը հանդես է գալիս մակբայ կապ երկարծեքությամբ: Հմմտ.՝ Թող ես առաջ մեռնեմ, հետո ադ լի՛հի (Գ. Գեմիրճյան),— մկբ.: Գրկեցի հողը մի ցուրտ ցանկությամբ, և նա իմ առաջ բացեց իր գիրկը (Վահան Տերչյան),— կապ:

Ընդհանրապես մակբայների և կապերի միջև հարաբերակցություններ են նկատվում հետևյալ հիմունքներով: Առարկայական նշանակությամբ թուլացրած բառերը հակվելով բաշերին՝ մակբայական իմաստ են արտահայտում, իսկ հակվելով գոյականներին՝ կապային իմաստ: Նույն ձևով գոյականական ծագում ունեցող դոռուք բառը արդի հայերենում մակբայ կապ երկարծեքություն ունի:

Այժմ քննարկենք այնպիսի տարածամանակյա տարածեք բառեր, որոնք գրաբարում հանդես են եկել խոսքիմասային միարծեքությամբ, իսկ ժամանակակից հայերենում դրանք եռարծեք բառեր են:

ա) Ածական > ածական/գոյական//մակբայ տարածամանակյա տարածեք բառեր են թափառական, վիրավոր, վայրենի, լուսարձակ, գրավոր և այլն:

Այսպես թափառական բառը գրաբարում միարծեք ածական էր «աստանդական, վտարանդի, թափառող, տարագիր, պանդուխտ» իմաստով, ինչպես՝ Այր թափառական գիտաց բազում ինչ: Թափառական այր կարծեցյալ (ՆՀԲ, 1, 801): Փաստորեն արդեն գրաբարում կարծես ձևավորվել էր թափառական մարդ (այր) ածական-գոյական կայում բառակապակցություն, և միայն ժամանակ էր պետք, որպեսզի կատարվի գոյական-որոշյալի կրճատում, որը հնարավորություն կտար թափառական բառի ածական-գոյական երկարծեքության ձևավորմանը: Սակայն միջին հայերենում այն դեռևս պահպանում էր միարծեք ածականի կարգավիճակը լեզվում, ինչպես՝ Ջմեղացեալ գծողս, գլխարդիս թափառականս ո՞վ սուրբ եղբարք, յիշեցէք (ՄՀԲ, 1, 258): Արդի հայերենում թափառական բառը արդեն եռարծեք է, ընդ որում եռարծեքությունը ձևավորվել է ոչ թե ածական > գոյական > մակբայ կամ ածական > մակբայ > գոյական հերթականությամբ, այլ ածականից գոյական և ածականից մակբայ:

Որոշե՞նք թափառական բառի խոսքիմասային պատկանելությունը՝ ելնելով նրա շարահյուսական կիրառությունից: Հմմտ.՝

Հեյ, պարոննե՛ր, սկանջ արեք

Թափառական աշուղին (Հովհ. Թումանյան),— ած.:

Թափառականները մտնեցան եկեղեցուն (Բ, 4, 376),— գոյ.: Մեր աշխարհից մենք հալածված՝ թափառական եղանք այսպես (Հովհ. Թումանյան),— մկբ.:

Փաստորեն, տարածամանակյա տարածեք այսպիսի բառերի խոսքիմասային արծեքները բացառապես հիմնված են գրաբարյան ածականի վրա, կապված են և սերում են դրանից:

բ) Ածական > ածական/գոյական//եղանակավորող բառ խոսքիմասային փոխանցման այս տեսակը հայերենին հատուկ երևույթ չէ, և մենք միայն մեկ օրինակ ենք արձանագրել: Այսպես՝ գլխավոր բառը գրաբարում միարծեք ածական էր «նշանավոր, երևելի, պարագլուխ, իշխան, ավագ, առաջնորդ, ազնվական» իմաստներով, ինչպես՝ Պետրոս գլխաւորն: Հաղաք գլխաւոր (ՆՀԲ, 1, 560): Միջի՛ր հայերենում պահպանել է խոսքիմասային արծեքը: Արդի հայերենում ածական է գրաբարյան բառիմաստի մի մասով՝ «կարևոր, հիմնական», ինչպես՝ գլխավոր խորհրդակա՛ն, հարց: Ածականը պահպանել է համահաստություն աստիճաններով փոխվելու կարգը՝ ա՛վելի գլխավոր—ամե՛հագլխավոր:

Գոյականակա արծեքը ձևավորվել է փոխանունության հիմքով՝ «դիրքով, պաշտոնով ավագ (անձ)» իմաստով, ինչպես՝ Սեֆակ մտա՞վ գլխավորը: Բարբառներում գոյականացել է նաև «ամուսին» իմաստով, օրինակ՝ Աստված տու՛նդ շեն պահի, գլխավորո՞ղ ողջ լինի (ԺՀԲԲ, 1, 411): Սակայն լեզվի զարգացումը հետսցրել է նրան, որ գլխավոր բառը որոշ կիրառություններում զրկվում է նյութական իմաստի արտահայտումից և ձեռք է բերում վերաբերականի «հատկություն, մանավանդ» իմաստը, ինչպես՝ Հա ռս պահանջում էր, որ մայրս... ոչ մի բանի չխառնվի և, գլխավորը, ոչ մի քահանա չհյուրասիրի տանը (Տույն տեղում): Այս դեպքում գլխավոր բառը զրկված է նյութական իմաստից և դրանից բխող քերականական կարգերից և արտահայտում է զուտ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը՝ դուևորե՛վ եղանակավորության իմաստ: Սակայն արտահայտած եղանակավորության իմաստը այս կամ այն չափով առկա է գլխավոր ածականի մեջ ոչ ուղղակիորեն, բաց ա՛նճողակիորեն հասկանալի է թվում՝ որտեղից առաջացավ «հատկապես, մանավանդ» հաստատական իմաստը:

գ) Գոյական > գոյական/ա՛ծական//մակբայ տարածամանակյա տարածեք բառերի թիվը մեր լեզվում մեծ չէ: Այսպես՝ սխալ բառը գոյական էր գրաբարում «սխալանք», անճը՝ ստություն, հանցանք» իմաստով: Արդի հայերենում նրա խոսքիմասային արծեքը ետփոխվել է և հավասարապես հանդես է գալիս գոյական/ա՛ծական//մակբայ եռարծեքությամբ.

ինչպես՝ Սխան ուղղվեց, սխալ խոսք, սխալ կարդալ: Խոսքիմասային մասնակի փոխանցման ուղղությունը, մեր կարծիքով հետևյալն է գոյական>գոյական→ածական→մակբայ: Այս բառին թերևս կարելի է ավելացնել եռարժեք խոփվ, հանգիստ բառերը:

դ) Մակբայ>մակբայ/ածական//գոյական տարածամանակյա տարածք միավոր է աշխարհաբար բառը, որը գրաբարում միարժեք մակբայ էր «ըստ աշխարհի, ըստ ժողովրդի, աշխարհասեր» իմաստով, ինչպես՝ Տոնեցուր մի աշխարհաբար, այլ գերաշխարհիկ (ՆՀԲ, 1, 260): Ժամանակակից հայերենում բառը իմաստափոխվել է՝ դառնալով մեր լեզվի զարգացման նոր շրջանի անվանումը և աշխարհաբար բառը. ինչպես բոլոր լեզուների անվանումները, արդի հայերենում մակբայ/ածական//գոյական եռարժեքություն ունի՝ -երեն ածանցով լեզուների համաբանությամբ. օրինակ՝ աշխարհաբար խոսել, աշխարհաբար լեզու, Աշխարհաբարը շատ գեղեցիկ լեզու է: Միարժեք>եռարժեք տարածամանակյա տարածքություն դրսևորող բառերը մեր լեզվում մեծ թիվ չեն կազմում՝ համեմատած միարժեք>երկարժեք բառերի: Տարածամանակյա տարածք բառերի տեսակները այսքանով չեն տարբերակվում, դրանք բազմաթիվ են և բազմապիսի, և մեկ հոդվածի ևահմանները հնարավորություն չեն տալիս անդրադառնալու այդ բոլոր տեսակների քննարկմանը:

**А. П. АЙРАПЕТЯН — Диахроническая разноценность частей речи как результат нелинейного словообразования.** — В армянском языковедении основным способом словообразования является: суффиксация, аббревиатура и усложнение. Автор называет этот способ линейным, а создание новых слов посредством частеречного перехода — нелнейным, рассматривает его в диахроническом аспекте, предлагает несколько его видов и направлений.